

Զբոսաշրջության ոլորտի ամփոփ բնութագիր

Հունվար 2009

Հայաստանի զբոսաշրջության ոլորտի արագընթաց զարգացումը վկայում է Հայաստանի՝ որպես զբոսաշրջային հանգրվանի, աճող գրավչության մասին: Վերջինիս նպաստում են երկրի ճանաչելիության մակարդակի բարձրացումը ամբողջ աշխարհում, ինչպես նաև ընդհանուր ենթակառուցվածքի տարեցտարի բարելավումը:

**ՀԻՄՆԱԳԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Ճյուղի վիճակագրություն
Մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ - 4,7%
Մասնաբաժինը արտահանման մեջ - 15,4%
Կապիտալ ներդրումներ - 285 մլն ԱՄՆ դոլար

Միջազգային զբոսաշրջիկների կատարած տարեկան ծախսերը - 330 մլն ԱՄՆ դոլար

Ճյուղում զբաղվածների թվաքանակը - 19,500
Մասնաբաժինը աշխատուժի շուկայում - 1,7%

~558,450 ներգնա զբոսաշրջիկներ
~515,547 արտագնա զբոսաշրջիկներ


Սփյուռքահայերի մասնաբաժինը միջազգային ժամանումների մեջ - 60%

~4,200 հյուրանոցային համարներ
~8,400 հյուրանոցային մահճակալներ

Զբոսաշրջության մրցունակության համաթիվ
130 երկրների մեջ 89-րդ տեղը

ՈՒՈՐՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. Հայաստանում զբոսաշրջային հիմնական հանգրվաններն են Երևանը, Ծաղկաձորը, Ջերմուկը և Դիլիջանը: Ներգնա զբոսաշրջությունը կենտրոնանում է հիմնականում Երևանում՝ շնորհիվ ենթակառուցվածքի և զբոսաշրջային քլաստերի զարգացվածության համեմատաբար բարձր մակարդակի:


Հայկական զբոսաշրջությանը ներհատուկ տարրերից են կրոնական, պատմական և մշակութային հուշարձանները, ինչպես նաև էկո-տուրիզմի զարգացմանը նպաստող բնական պայմանները: Բացի այդ, երկրում ակնհայտորեն ուրվագծվում են ագրոտուրիզմի և արկածային տուրիզմի զարգացման բարենպաստ հնարավորությունները:



Ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից է սեզոնայնության բարձր մակարդակը: Հյուրանոցների միջին տարեկան ծանրաբեռնվածությունը տատանվում է 40-50%-ի շրջակայքում: Սեզոնայնությամբ պայմանավորված խոչընդոտները կարող են մեղմացվել միայն այնպիսի հանգստավայրերի ստեղծմամբ, որոնք կառաջարկեն լայնորեն դիվերսիֆիկացված ծառայություններ, ինչպիսիք են ձիերով արշավները, ազգագրական զբաղմունքները և այլն:

Ոլորտում դիստրիբյուցիոն համակարգը դեռևս լավ կազմավորված չէ և գտնվում է զարգացման ելակետային մակարդակում: Ընդ որում, տուրօպերատորների ներգրավվածության մակարդակը բավականին ցածր է թե՛ ներքին, թե՛ ներգնա զբոսաշրջության ոլորտներում: Համաձայն «Հայաստանի զբոսաշրջության ոլորտ» ներդրումային ձեռնարկի 2007 թվականին Հայաստանում հանգստացող միջազգային զբոսաշրջիկների միայն 17%-ն է օգտվել տուրօպերատորների ծառայություններից հանգիստը կազմակերպելու համար:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ. Հայաստանում զբոսաշրջային ծառայությունների տարեցտարի բարելավումը նպաստում է միջազգային ժամանումների թվի հաստատուն աճին, որի միջին տեմպը կազմել է 20% 2003-2008 թվականների ընթացքում: Հատկանշական է, որ չնայած երկրում տարեսկզբյան անկայուն քաղաքական և սոցիալական իրավիճակին՝ ոլորտում զարգացման միտումը պահպանվել է նաև 2008 թվականին. արձանագրվել է միջազգային ժամանումների 9.4% աճ՝ 2007թ.-ի համեմատ:



Միջազգային զբոսաշրջիկների հոսքը հիմնականում Վրաստանից և Ռուսաստանից է, որը պայմանավորող հիմնական գործոններն են տվյալ երկրներում հայերի համեմատաբար մեծ համայնքների առկայությունը Հայաստանին մոտ գտնվելը: Միջազգային ժամանումների մոտ 60% կազմում են Սփյուռքահայերը, որոնք մեծապես նպաստում են Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Ժամանումների ընդհանուր թվաքանակի մեջ հանգստի և ժամանցի նպատակով ճանապարհորդող զբոսաշրջիկների մասնաբաժինը բավականին ցածր է, համաձայն տարբեր գնահատականների այն կազմում է միջինում 40,000-60,000 տարեկան այցելություն 11-12 օր կայանման միջին տևողությամբ:

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Հայաստանում զբոսաշրջության զարգացումը մեծապես կանխորոշված է ոլորտի ընդհանուր ենթակառուցվածքով, որի բարելավումը պահանջում է հիմնականում պետական նախաձեռնությամբ մեծամասշտաբ ծրագրերի իրականացում: Զբոսաշրջության համաշխարհային շուկայում երկրի ճանաչելիությունը որոշակիորեն աճել է և արդեն ուրվագծվում է Հայաստանի դիրքավորումը որպես մշակութային տուրիզմի հանգրվան: Վերջինիս նպաստել են ոլորտի զարգացմանը ուղղված մի շարք նախաձեռնություններ, ինչպիսիք են կառավարության կողմից համազգային մասշտաբով մշակութային միջոցառումների և տոնակատարությունների իրականացումը, մասնակցությունը հեղինակավոր միջազգային ցուցահանդեսներին, ոլորտի պատշաճ խթանման քաղաքականության իրականացումը, տուրիզմի զարգացման և ինֆորմացիոն գործակալությունների գործունեությունը:

Համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված «Զբոսաշրջության մրցունակության» զեկույցի Հայաստանը 2007 թվականին 130 երկրների շարքում զբաղեցնում է 89-րդ տեղը: Ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից են վիզային պահանջները հիմնական հաղորդակցող երկրներից, մարքեթինգի և բրենդինգի ոչ արդյունավետ մակարդակը, կառավարության կողմից տվյալ ճյուղին շնորհված գերակայության ներկայիս անբավարար մակարդակը, օդային և վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքի թույլ զարգացվածությունը:

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ. Համաշխարհային տնտեսական ճգնաժամը դժվարին մարտահրավերներ է նետում նաև Հայաստանի զբոսաշրջության ոլորտին: Ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսության լճացումը և վերջինիս հետևանք հանդիսացող աճող գործազրկության մակարդակը, մեծապես կսահմանափակի տնային տնտեսությունների՝ տուրիզմին հատկացվելիք բյուջեն: Նմանատիպ միտումը հատկապես վառ կարտահայտվի Հայաստանի զբոսաշրջության ոլորտում, որը ներկայանում է գլոբալ շուկային բավականին թանկ գներով:

Ոլորտի զարգացման ներկա միտումների վրա հիմնվելով՝ ՀՀ Ձբոսաշրջության զարգացման հայեցակարգը (2007-2030թթ.) նպատակադրում է 2030 թվականին զբոսաշրջիկների քանակը հասցնել 4.5մլն-ի (3մլն միջազգային և 1.5մլն ներքին զբոսաշրջիկներ):

Կարող եք կապ հաստատել հեղինակների հետ info@evconsulting.am էլ-հասցեով:

Հովսեփ Էմին 123,
Երևան 0051
Հեռ: +37410 219740
E-mail: info@ev.am
www.evconsulting.am

«Ի-Վի Քոնսալթինգի» այլ ամփոփ ակնարկները

- ✓ Առևտրային անշարժ գույքի շուկա
- ✓ Հյուսիսային շուկա
- ✓ Մասնաբերքի շուկա
- ✓ Բնակելի անշարժ գույքի շուկա
- ✓ Գրասենյակային անշարժ գույքի շուկա
- ✓ Մանրածախ առևտրի ոլորտ

Ի-Վի Քոնսալթինգն ընդարձակում է մտահորիզոնը իր հետազոտական թևի՝ **«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի** գործունեության շնորհիվ: Վերջինիս հիմնական մասնագիտացումներն են՝ մրցունակությունը և տնտեսական զարգացումը, ռազմավարությունը, ներդրումները, սփյուռքի ցանցերը, արժեքները: www.ev.am